Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի լրամշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.06.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Գ. Ծատուրյան
Ա. Բոյաջյան
Ս. Թորոսյան
Ա. Չավուշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

1. Գնային առաջարկի ներկայացման և արդյունքների գնահատման մասին

(Ա. Գևորգյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 Գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին, 10.06.2026թ. էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ՀՀՔԿ-ՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու հրավեր:

1.2 «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից սահմանված ժամկետից շուտ էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	5 000 000	4 160 000	832 000	4 992 000

1.3 «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկների համաձայն «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հայտը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Գևորգյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀՔԿ-ՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Գևորգյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պետական գնման պայմանագիրը կնքել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Գևորգյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Գ. Ծատուրյան

---------- Ա. Բոյաջյան

---------- Ս. Թորոսյան

---------- Ա. Չավուշյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ա. Մանուչարյան